

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԱՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԱԿԱՆ ԹԻՒՆՆԵՐ

Գործակցութեան պահանջ.— ԵՆՐԻՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Երեւանից. Նամակ Դուբայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ. Ժամանակակից Պարսկաստանը:

ԳՐԱԿԱՆ ԹԻՒՆՆԵՐ

Կեռ գործը չը սկսած, երեւան եկան Նախնային և հակառակութեան նշանները: Կեռ չեն շինվել Պետրոպոլիսի և Բագուի մէջ ճոթեղէնի գործարանները, Վոսկիլայում սկսեցին խօսել նրանց մասին, իբրեւ վտանգաւոր մրցակիցների մասին: Պաշտօնական մի յանձնաժողովում մտակցայինները արդէն վրդովմունք ցոյց տուին, որ մի գուցէ իրանց ապրանքները անկարող լինեն էժան կերպով ծախվել կովկասեան վաճառանոցում և ընկձիկն տեղական գործարանական արդունագործութիւնից: Վոսկիլայիցները հանգստացրին ժողովում, առարկելով, որ Անդրկովկասում ընդամենը գործում է հիւսիսէն համար մի հարիւր հազար մարդ, մինչդեռ Վոսկիլայի շրջանի գործարաններում մի ահագին և անհամեմատելի մեծ թիւ, այն է հինգ միլիոն մարդ: Եւ ուրեմն վտանգաւոր մըրցութիւնն մասին խօսք չէ կարող լինել, գոնէ առ այժմ:

Անդրկովկասը դեռ այնքան քիչ գործ է կատարել հիւսուածքների գործարանական արդունագործութեան կամ ուրիշ խօսքով մանուֆակտուրայի ասպարէզում, որ խօսել Անդրկովկասի այդ մրցութեան մասին բոլորովին ծիծաղելի է: Կեռ երբ կանցնեն տարիներ և տասնեակ տարիներ և երկրի մէջ կը հինգիւն աչքի ընկնող գործարաններ, այն ժամանակ գուցէ անտեղի չի լինի վտանգ տեսնել Անդրկովկասի մըրցութիւնից: Իսկ այժմ միայն կարելի է ցանկալ, որ Անդրկովկասը մեծագոյն իր

անշարժ գրութիւնից և խնկալէս կարողանայ էական քայլեր անել որոշ մասերում գործարանական կեանք ստեղծելու, որի համար նա բնական յարմարութիւններ ունի:

Արդարեւ Անդրկովկասը կարող է մատակարարել գործարանների համար հում նիւթեր նոյն իսկ իր երկրի արտադրութիւններից: Նա արդէն ապրեւում է շերամ, բուրգ, մետաքս, զանազան արմոյիք և պտուղներ, որոնք կարօտ են գործարանական մշակութեան մշակված թանկարէն ապրանքներ դառնալու համար: Անդրկովկասը, շնորհիւ նաւթի, կարողութիւն ունի էժան վառելիք և լուսաւորութեան նիւթ ունենալու: Անդրկովկասը հարեւան է Ասիայի ընդարձակ երկրների հետ, որոնք կարող են ծառայել գործարանական արդունքների սպառման համար իբրեւ ընդարձակ վաճառանոցներ: Այդ բոլորը ճիշդ է: Իայոյ դա մի և նոյն ժամանակ ցոյց է տալիս, որ Ռուսաստանի այդ հարուստ մարդկային է վերջապէս իր դերի մէջ մտնի և իր բազմակողմանի արդունագործական զարգացմամբ դառնայ օգտակար թէ տեղական ազգայնականութեան, և թէ ամբողջ պետութեան շահին համար: Մենք համատեղած ենք, որ բաւականապէս գործը կը գտնվի թէ Վոսկիլայի շրջանի և թէ Անդրկովկասի համար և խելացի գործունէութեամբ կարելի է կազմակերպել գործակցութեան մի սխեմա, որ կը նպաստի ընդհանուր շահերի ապահովութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մօտ մի ամիս առաջ Պետերբուրգի Ակադեմիայի ժողովում պատուաւոր ակադեմիկոս եւ յայտնի գրող Ա. Կօնի արտասանեց մի ճառ, որի մէջ առաջ թէ առաջ լեզուն անդադար փչանում է եւ փչացնողը գլխաւորապէս ամեն նորեայ մամուլն է, ուստի պէտք է որ Ակադեմիան ուղարկութիւն դարձնէ այդ երեւոյթի

նման. մի խօսքով գործադրում է այն բոլոր իրաւունքները, ինչ որ Շահն է գործադրում, միայն Ատրպատականի նահանգում. նա ունի միտախոր (պառնապետ), միջնորդ (որոտրպապետ), միջնորդ (դահմապետ), շաթիր, խօջաբաշի և խօջաներ (ներքինապետ եւ ներքինի). նա տալիս է ֆերմաններ, տալիս է խանութիւն, շքանշան. երբ նրա հարէմը ճանապարհ է գնում, ամենքը պէտք է կամ երեսներ ծածկեն, կամ շուռ գան դէպի պատու. ոչ ոք նրա մօտ չէ կարող նստել, նոյն իսկ նրա եղբայրները, ամենքը պէտք է կանգնած մնան:

Տեսնենք ինչպէս են մեծանում եւ դաստիարակվում վախճանները, իսկ դրա համար տեսնենք ինչպէս է մեծացել Մուղաֆֆէր-է-դ-դինը:

Մինչեւ 10 տարեկանը նա մեծացել է հարեւան թայեանների (դայանիների) հսկողութեան տակ. դրանց ամբողջ իմաստութիւնը կայանում է զանազան հեքիմներ եւ առասպելներ պատմելու մէջ զանազան իմաստների քաջագործութիւնների մասին: Տասն տարեկան նշանակվելով վախճանի՝ նա բերվեց Թաւրիզ և յանձնվեց վախճանի (զլիւաւոր դաստիարակ) ու լայանների ձեռքը: Նրա լայաքային կողմ է, ինչպէս սովորաբար ընդունված է, մի ձերբունի, շատ անգամ մի մօլլա, որ սովորեցնում է ինչպէս ուսել, խմել, նստել, վերկենալ, նստալ անել, սովորեցնում է գրել, կարդալ, հաշուել: Մուղաֆֆէր-է-դ-դին իշխանը այդպիսի դաստիարակների ղեկավարութեամբ սովորեց զուրանը, կարգաց հաֆիզ, Սադի, Շահնամէ (սրանք են սովորական գրքերը), մի խօսքով նա ստացաւ այն կրթութիւնը, ինչ սովորաբար ստանում է ամեն մի հարուստ պարսիկ պատանի, ուստի միանգամայն սխալ է այն տեղեկութիւնը, որ մի քանի ուսուցիչներ տարածեցին, թէ իբր Մուղաֆֆէր-է-դ-դինը

վրա ինչպէս ասացինք այն ժամանակ, պարսկական մամուլը միահամուռ կերպով բողոքեց ճառախօսի դէմ եւ ասաց, որ ինքը լեզուի խանդարման մէջ չառ մեղք չունի: Այդ առիթով բանակովը շարունակվում է մինչեւ այսօր եւ, երեւի, դեռ էլի կը շարունակվի, քանի որ հարցը այնքան կարեւոր է, ստաշնա-կարգ, Առանց մայրենի լեզուի չէ կարող ազգայնութիւնը, կանոնաւորութիւնը ազգի մտաւոր հարստութեան, կենսականութեան ամենամեծ նշաններն են: Պատասխանելով ակադեմիական ամբիօնից արտասանված մեղադրական ճառին, լրագրողները անցեալից եւ ներկայից վերցրած փաստերով հաստատեցին, որ առաջ լեզուի խանդարմանը նոր երեւոյթ չէ, որ նա սկսվել է դեռ անցեալ դարից եւ թէ պէտք է մեղադրվողների նստաբան պատրաստել այդ մեղքը գործողների համար, դրա վրա նստողները միայն ամենուրեք լրագրութիւնը չը պիտի լինի, այլ եւ շատ նշանաւոր ուսուցիչներ, նոյն իսկ այնպիսիներ, որոնք ուսուցիչ են հանդիսացել շատ գրողների համար:

Այս բանակովը, որի մանրամասնութիւններին հետ, դժբաղդաբար, հնարաւորութիւն չը կայ ծանօթացնելու մեր ընթերցողներին, տրուել ամօթագրութիւնների է պատճառում հայ գրողին: Ռուսաց լեզուն արդէն այնքան կանոնաւորված, այնքան հարուստ է արտայայտիչ, նուրբ ձեւերով, որ նրա այժմեան խանդարման դէմ բողոքողների ասումն է, թէ բաւական է մի քիչ ուղարկ լինել լեզուի կանոնների վերաբերմամբ, բաւական է որ գրողը անվոյթ չը լինի, եւ ամեն ինչ կազդէն կը գնայ: Իսկ ինչ պիտի ասենք մենք, հայերս, մեր լեզուն կենդանացնելու, հարստացնելու համար: Մի մեծ հարց է սա, որ անհամար դժուարութիւններ ունի իր առաջ: Մենք ունենք մի գրական լեզու, որ դեռ նոր—ընդամենը մի 30—40 տարի առաջ, ստացաւ գոյութեան կատարեալ իրաւունք: Այդ լեզուն դեռ աղքատ է, դեռ չէ կանոնաւորվել, նոյն իսկ քերականական հաստատ ու որոշ կանոններ չունի: Մեր մէջ շատ քիչ են երեւացել ճշմարիտ տաղանդի

աէր մարդիկ, որոնք գեղարուեստական գործունեւորի մէջ հանդէս բերէին լեզուի հարստութիւնը եւ դառնային օրինակ ամենքի համար: Հայերէն լեզուն վնասված է մեր ինտելիգենցիայի չըջանից, ուր նա, եթէ լինէր գործածական լեզու, անշուշտ կը կատարելագործվէր, կը կենդանանար, նոր ձեւեր կը ստանար: Մեր մամուլի ասպարէզում գրիչ վերցնելու իրաւունք են սեփականել այնպիսի մարդիկ, որոնք թէ իրանց մտածողութեան ձեւով, թէ իրանց տգիտութեամբ լեզուն միայն խանդարել եւ փչացնել կարող են: Նոյն իսկ այնպիսի երեւոյթներ, որ խլով բազրի պայծառ են յանձն առնում կատարելապէս անգործ մարդիկ, լաւ ապացոյցներ են թէ որպիսի անտէրութեան է մատնված մեր լեզուն: Կայ մեզ համար եւ այն վերին աստիճանի ցաւալի երեւոյթը, որ—մեր գրական լեզուն բաժանված է երկու մեծ ճիւղի—արեւելեան եւ արեւմտեան. այդ երկու ճիւղերը ոչ միայն միասեակ զարգացում չեն ստանում, այլ ուղղակի հակառակ ուղղութեամբ են գնում, միմեանց արհամարում են, միմեանց ծաղրում: Մինչդեռ արեւելեան հայերը համագլած են, որ գրական լեզուն պիտի պարզ եւ հասկանալի լինի, ուրեմն եւ ժողովրդական լեզուի վրա պիտի հիմնէ իր գործութիւնը, արեւմտեան հայերը, ընդհակառակն, վերադառնում են գրաբարին, ստեղծում են մի թէեւ հարուստ, բայց արհեստական, բոլորովին անհասկանալի լեզու եւ կարծում են թէ լեզուի մաքրութիւնը միայն այն դէպքում կատարել կը լինի, երբ օտար ամենամանրագէտ բաները չեն գործածվի: Անցեալ տարի մենք Պարիզում հրատարակվող մի ամսագրից բերել էինք մի բառակոյտ, մի կատարեալ լեզուային քսոս եւ ցանկութիւն էինք յայտնել, որ արեւմտեան հայերը կարողանան գրել ամենքին մատչելի, պարզ, ժողովրդական լեզուով: Իայոյ գիտէք ինչ պատասխան ստացանք: Մեզ ասացին, որ գրողը չը պիտի մտածէ թէ արդօք խաւար ամբոխը կը հասկանայ իրան թէ ոչ: Այսպէս, ուրեմն, դուրս է գալիս, որ մենք մեզ պարտաւոր էլ չենք համարում գրել ամբոխի համար: Այս ուղղութիւնը մեր մէջ, կարծէք,

չեն. աշակերտները նստում են նստարանների վրա. ֆալսիա չը կայ, սովորեցնում են բացի զուրանից նաեւ թուաբանութիւն, աշխարհագրութիւն, տարրական բնական պատմութիւն, երգեցողութիւն:

Կրթութիւնը եւ ուսումը պարսիկների մէջ վերջացած է համարվում, երբ պատանին հասնում է արեւունքին: Շարիաթը պատուիրում է ամուսնացնել, ուստի եւ 14—15 տարեկան հասակում պարսիկ պատանին քեաքին է կատարում. եթէ քեաքինը որ եւ է պատճառով դեռ չէ կարող գլուխ գալ, պէտք է «սիլա» կին առնել:

Տասն եւ հինգ տարեկան հասակում ամուսնանալով, Մուղաֆֆէր-է-դ-դին վախճանը շարունակում էր միայն ֆրանսերէն լեզուի դասերը: Իսկ այնուհետեւ ժամանակը մեծ մասը նուիրում էր ձիավարութեան, հրացանաձուլութեան եւ որսորդութեան, որոնք կազմում են պարսից շահադասների սիրելի եւ սովորական զուարճութիւնը: Խիստ ճարպիկ հրացանաձիգ է համարվում Մուղաֆֆէր-է-դ-դին Շահն եւ նա ունի ամեն տեսակ հրացանների հարուստ ժողովածու: Նա մնաց վախճանը մինչեւ 1896 թիւը, ուրեմն մինչեւ 43 տարեկան հասակը եւ այդ բոլոր ժամանակամիջոցում նա ապրեց Թաւրիզում. միայն երկու կամ երեք անգամ նա գնաց Թէհրան, հօր հրաւերով, եւ ամեն անգամ մի քանի ամիս մնաց մայրաքաղաքում:

Իսկապէս, վախճանների վիճակը շատ էլ նախնային չէ. նրանք թէեւ համարվում են Ատրպատականի կուսակալ, բայց իրական կառավարիչը լինում են Թէհրանից ուղարկված փիշաքները, որոնք, շատ անգամ, ինչպէս օրինակ, Ամիր Նիզամը, աշխատում են բոլորովին չէղբայանել վախճանի իշխանութիւնը:

ԲԱՆԱԿԱՆ ԹԻՒՆՆԵՐ

ԺԱՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

II

Ղաջար ցեղը, ծագումով Մագանդարանից, լինելով մոնղոլ-թաթարական ցեղ, թէեւ գեղեցկացած իրանեան ցեղի խառնուրդով, հարկ է համարել առանձին համակրութիւն ցոյց տալ թուրք ցեղին, որի օջախը Պարսկաստանում համարվում է Ատրպատականի նահանգը եւ մանաւանդ Թաւրիզ քաղաքը: Այդ նպատակով ֆալսիա Շահի ժամանակից վախճանները (գահաժամանակները) իրանց բնակավայրը հաստատել են Թաւրիզում եւ դրանով պարսկական գահի ժառանգը սովորաբար ստանում է թուրքական դաստիարակութիւն եւ ոչ պարսկական. իսկ տարբերութիւնը այդ երկու դաստիարակութիւնների մէջ, չը նայելով թուրքերի եւ պարսիկների համակրծեութեան, ահագին է: Պարսկական դաստիարակութիւնը մեղմ, մարդասէր եւ ներողամիտ բնաւորութիւն ունի. թրքականը—վայրագ, անհաշտ եւ աններողամիտ:

Վախճանները համարվում են մի եւ նոյն ժամանակ Ատրպատականի կուսակալ, թէեւ իրանք չեն կատարում. կառավարում է նահանգը փիշաք ար—առաջին պաշտօնեան, որ նշանակվում եւ ուղարկվում է Թէհրանից եւ նոյն դեմք է խաղում վախճանի մօտ, ինչ դեր խաղում է մեծ վեզիրը Շահի մօտ: Իսկապէս վախճանը մի փոքր Շահ է, որովհետեւ նա ունի Ատրպատականի բնակիչների վրա կեանքի եւ մահի իրաւունք. նա ունի արքայական հարէմ. մեծ տօներին սալամի է նստում Շահի

գերակշիռ է հանդիսանում. Կ. Պոլսի հայերէն լրագրերնր լեզուն գնալով անհասկանալի, խորթ է դառնում. յաճախ եւ շատ յաճախ հանդիպում էք այնպիսի բառակոյտերի, որոնց կարգաւ անգամ սարսափելի է, ուր մնաց հասկանալի:

Անա մեր գրութիւնը: Մեզանից ամեն մէկը իրաւունք է համարում անխնայ աղծատել լեզուն եւ հրատարակել այդ բարբարոսութիւնը, բարենորոգութիւնը: Ի՞նչ ենք ասում: Մեր գրականական լրագրողութիւնը նոյն իսկ ամեն ջանք գործ են գնում, որ հայերէն տառերով տպւածն էլ անկարելի լինի կարդալ: Այս քանի օրերը մեզ պատահեց մի այսպիսի բառ. «Մուտորով»: Հրաշալի է, չէ: Մենք շատ եւ շատ հեռու կը գնայինք, եթէ կատարեալ անգրագիտութեան օրինակներ էլ բերէինք այստեղ: Մակէրնիքի, կլոննիքի ձեռքով կառավարվող գրականութիւնը ուրիշ ի՞նչ կարող էր տալ, եթէ ոչ աղճատում, բարբոսեան խառնակութիւն: Եւ սակայն չը պիտի մոռանանք, որ մայրենի լեզուն մեր միակ անկողնատեղի տաղանդն է, որի վրայ պիտի հիմնվի մեր առաջագիտութիւնը: Ի՞նչ ճար կայ մեզ համար...

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՖՈՒՐԳԻՑ

Մայիսի 15-ին
Ներկայ տարվայ զարմանք Պետերբուրգը հարուստ էր գեղարուեստական պատկերահանդէսներով: Կանգ չառնելով մասնաւորապէս այս կամ այն նկարչի զանազան ժամանակ հանդէս դրած նկարները վրա, որոնց մասին պարբերական մամուլը տեղեկութիւններ տուել է, մենք այստեղ կը խօսենք մի պատկերահանդէսի մասին, որ բացված էր Մալայա Մօրսկայա փողոցի վրա մարտի 12-ից մինչեւ ապրիլի 10-ը եւ որը մեծ աշխուժութիւն ունեցաւ:

Այդ պատկերահանդէսը բաղկացած էր գեղարուեստի եւ քանդակագործութեան արհեստների 150 օրինակներից: Պատկերահանդէսին մասնակցում էին թէ՛ Ն. Ի. Կրանցէնկօի, Ա. Բ. Սկրզեցկօի, Գոտապիի նման խոշոր տաղանդներ, եւ թէ՛ Սկլոբոյօվների նման սկսնակ ընդունակ նկարիչները: Մասնակցում էին նոյնպէս եւ Քրիշիւսին ոչ անչափ երիտասարդ տաղանդաւոր նկարիչ Ա. Ֆէթլաճեան: Այս անգամ նա հանդէս էր դրել երեք գործ՝ 1) «Ջուր բաժանելու ժամանակը Վենեցիայում» ջրաներկ պատկերը, 2) «Կաթօլիկ կոյսը» եւ 3) «Ալեքսեյ անող հայ քահանայն»: Վերջին չափ բոլոր երեք պատկերներն եւս կատարեալ աշխուժութիւն ունեցան: Մասնաւորապէս հասարակութեան ուշադրութեան էր արժանանում «Ջուր բաժանելու ժամանակը Վենեցիայում» պատկերը: Այդ պատկերը, որպէս ջրաներկ

Մնալով Թաւրիգում իբրեւ անուանական կուսակալ, ուրեմն չը կառավարելով նահանգը իւրողապէս, հետո մնալով մայրաքաղաքից եւ ոչ մի անմիջական մասնակցութիւն չունենալով պետական գործերի մէջ, Վալիսահը միանգամայն անպատրաստ է լինում, երբ կոչվում է, իբրեւ Շահ, կառավարել երկիրը. ծանօթ չը լինելով նախորդ Շահի վեզիրներին եւ պաշտօնականներին հետ, նա վտանգութիւն չէ տաժում դէպի նրանց, հեռացնում է եւ չըջապատում իրան այն մարդկանցով, որոնց հետ ստորել է Վալիսահը ժամանակը: Ամբողջ արգելները փոխում է. հարկաւոր կանանցով լի հարէմը անհետանում է եւ նրան յաջորդում է նոր Շահի հարէմը:

Այդպէս էր եղել Նասրէդդին Շահի գահակալութեան ժամանակ, այդպէս եղաւ երբ Մուղաֆֆէրէդդին Շահ դարձաւ: Նա իր հետ տարաւ Թէհրան իր բոլոր թուրք պաշտօնեաներին. հանքը հեռացրդվելին, բացի մեծ վիզիր Ամին Սուլթանից, որի հեղինակութիւնը այնքան մեծ էր, որ սկզբում անհնար էր նրան հեռացնել, բայց թուրք պաշտօնեաները մի տարուց հետ այդ էլ գլուխ բերին: Ամին Սուլթանը, որ ստացել էր նոյն իսկ Սադրադամի մեծ տիտղոսը, քաղաքից Ղուտ. մեծ վեզիրը նշանակվեց Ամին-Պօլէն, որ Թաւրիգի փիշքար էր եղել. մնացած բոլոր պաշտօնները գրաւեցին Թաւրիգից եկած թուրք պաշտօնեաները: Սակայն գործերն այնքան վատ ընթացք ստացան թուրքերի ղեկավարութեան տակ, այնպէս խճճվեցին, որ Շահը ստիպվեց նորից պաշտօնի կանչել Ամին Սուլթանին, որը վերադառնալով Ղուտից, նորից ստանձնեց սադրապետութեան պաշտօնը եւ այսօր Իրանի իրական կառավարիչն է:

Տեսնենք այժմ ինչպէս է անցկացնում իր

գործի լատոգոյն նուշ, լուսանկարեց «Перс. ЖИЗНЬ» շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ գետնեց իր շաբաթաթերթի № 144-ում: Առհասարակ մեր նկարիչը սկսում է կամայկամայ Պետերբուրգի հասարակութեան համակրութիւնը գրաւել իր արգասաւոր տաղանդի արտադրութիւններով:

Իսկ նկարչի տաղանդի յատկանշանքից մէկը, գործին տեղեակ անձանց կարծիքով, այն է, որ նա գիտէ միատեսակ գեղարուեստականութեամբ արտադրել թէ՛ մի որ եւ է նշանաւոր անցքի եւ թէ՛ շատ աննշան անցքի սլուփաները: Այժմ Ա. Ֆէթլաճեան սկսել է նկարել մի պատկեր, որի երկարութիւնը մէկ սափէնից աւելի է եւ լայնութիւնը 2 արշին է: Նկարի նիւթը վերցված է վրաց աղուականների կեանքից: Նկարը ներկայացնում է «Ալեքսիսկան պիկնիկից յետոյ» Անգրիկովիսի ամենալաւ տեղերից մէկում: Այդ նկարը այս օրերս կաւարովի եւ երեւի հանդէս կը դրվի Թիֆլիսում: Կարծում ենք, որ շատ նպատակալարմար է յաւերժանել ներկերով վրաց պատմական կեանքի հանդիսաւոր մոժէնտներից մէկը, չը նայելով ոչ մի ազգային «խճճանքի» վրա, որը ժամանակ առ ժամանակ տեղ է գտնում մինչեւ անգամ մայրաքաղաքի լրագրութեան: Աւելի լաւ է միմանց ուսումնասիրել, որպէս այս դէպքում վարվել է նկարիչը, եւ ծանօթացնել իր ազգակիցներին եղբայր-ժողովրդի ներքի ազգային ստեղծագործութեան արանձնայատկութիւնների եւ հոգեւոր պահանջների հետ, քան զբաղվել փոխադարձ հալածանքներով:

Մ. Ալլահվէրդեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 12-ին Երեւանի վրա տեղացող կարկուտի սարսափը դեռ եւս չէ անցել: Վնասը շատ մեծ են հաշուում. այժմ մի յանձնաժողով զբաղված է այն վնասների ստուգութեամբ, որ կրելին կարկուտից այգիները: Վնասը ծանր է ոչ միայն նրա համար, որ այս տարվայ բերքը ոչնչացել է, այլ եւ այն պատճառով, որ կարկուտի կորստաւոր ձեւերը եւ արմատները նորից դարգանալու եւ պտուղ տալու համար հարկաւոր է մէկից մինչեւ երկու տարի, այնպէս որ եկող տարի էլ կը լինի խաղողի աննշան բերք:

Ինչպէս երեւում է, այդ օրը կարկուտ տեղացել է եւ շատ տեղեր, օրինակ, Սուրբաշուի մի քանի գիւղերը սաստիկ կարկուտահար են եղել: Մի քանի գիւղեր այնպիսի վնասներ են կրել, որ Մարգարա, Յուսէֆի, Ալիշա, Բլուր, Հախվերի գիւղերից շատերը գիւղացի էջմիաժին վանքից կորեկ ստացան վնասված տեղերը նորից ցանելու համար: Կարկուտի մասին լուծ

ժամանակը Կիւրոսների եւ Դարեհների յաջորդը:

Շահը հարեմից դուրս է գալիս առաւօտեան շատ վաղ, արշալոյսին. հարէմի դռնից նրան առաջնորդում է խօջապային (ներքինապետը) դէպի իսլամաթի սենեակը (առանձնասենեակը), ուր, փիւղմաթները մատուցանում են թէյ, սուրճ եւ դալան, երբ Շահը նստած կատաւելը վերջացնում է: Շահի անձնական սպասաւորութեան համար հետեւեալ պաշտօնեաներ են: 1) արքայիսանէ (ջրատուն), 2) դահլիսան (սրճատուն), 3) սանդղդիսանէ (հանդերձատուն եւ անձնական զանաւարան), աշխուհիսանէ (խոհանոց). ամեն մի «խանէ» ունի պետ, բաղմաթիւ օգնականներով: Նրանց մէջ կարեւոր դեր է խաղում սանդղդիսանէ, որովհետեւ այդտեղ են գտնվում եւ բոլոր այն թանկարկի շուրերը, հագուստները, որոնք Շահի կողմից իբրեւ խալաթ (պարգև) տրվում են զանազան անձանց եւ պաշտօնեաների. բայցի դրանից սանդղդիսանում է կենսորոնացած Շահի անձնական զանաւոր: Կան եւ բաղմաթիւ այլ խանէներ, որոնց յատկացրված է այս եւ այն պաշտօնը:

Առաւօտեան ժամը 8-ին Շահն անցնում է բիրուտը եւ մի առանձին սենեակում ընդունում է Սադրապային, եւ մնացած միւս վեզիրներին, որոնք գալիս են ղեկուցումներ տալու: Երբ վեզիրները հեռանում են, եթէ դեպքաների կամ այլ պաշտօնական ընդունելութիւն, ունկնդրութիւն չէ լինում, Շահը նարթախտա, կամ սաթրանջ է խաղում իր պաշտականներից մէկի, Հաքիմ-Մուլլայի, Վեզիր-Հիւսայունի, Ջահիր-Պօլլի հետ: Եթիկէտը պահանջում է, ի հարկէ, որ Շահի հետ խաղացող տարվի: Ժամը 11-ին նհարի (նախաճաշի) ժամանակն է արդէն: Սուփրախանի (սեղանա-

րեր կան նաեւ Շարուր-Դարալագեղի կողմերից, սակայն այդ լուրերը դեռ չեն ստուգված: Ջը նայած, որ եղանակները շարունակում են անձրեւային եւ բաւական հով անցնել, ցորենի գինը չէ իջնում եւ թխած հացն էլ դժուարութեամբ է ձեռք բերվում:

Մի քանի տեղեկութիւններ նորից թեմական դպրոցի մասին: Ինչպէս երեւում է թեմական դպրոցի տեսչութիւնից արձակված Բենիկ վարդապետը էջմիածնում էլ հանգիստ չէ նստում: Մինչդեռ վեհապետն ընդունելով Բենիկի եւ 5 ուսուցիչների հրաժարականը, ժամանակաւոր տեսչի պաշտօնակատար նշանակում է ուսուցիչներից մէկին, այն է Ս. Տէր-Գաբրիէլեանին, մինչեւ քննութիւնների վերջնալը: Ի դարմանս ամենքի, կիրակի օր էջմիածնից յանկարծ գալիս է էլի մէկ նոր ժամանակաւոր տեսչի պաշտօնակատար—Յովհաննէս Յովհաննիսեան՝ հրահանգ ունենալով հրաւիրելու. նորից հրաժարված հինգ ուսուցիչներին: Սակայն Սուքիաս Երեւանիսկոպոսը Յովհաննէս Յովհաննիսեանին չընդունեց ասելով թէ Տէր-Գաբրիէլեան արդէն նշանակված է: Տեսնում էք որպիսի անիշխանութիւն. ոչ մէկն իր կաշուի մէջ չէ մտնում:

Լսվում է, որ թեմական դպրոցում տեսուչ կը նշանակվի Շուշու դպրոցի այժմեան, կարծես արդէն հրաժարեցրած, վարդապետ տեսուչը, իսկ Շուշի պիտի ուղարկվի տեսչի պաշտօնով Բենիկ վարդապետը: Նախօրօք տալով սկզբնական լուրը թէ Երեւանի մէջ Շուշու հասարակութեան, թող օր առօր իրանց գլխի ճարը տեսնեն, եթէ ոչ սրտնից յետոյ այդ խեղճ չարասանը դպրոցները աւելի էլ վատ օրերի հանդիսատես պիտի լինեն:

Այսքան դառն փորձերից յետոյ արդեօք էջմիածինը կրկին պիտի շարունակէ իր սխալ քայլը, կամ միթէ չը կան վնասներ, ուր կարելի լինի ուղարկել այդ «արժանաւոր» հայրերին: Ա.—Դօ.

ՆԱՄԱԿ ՂՈՒՐԱՅԻՑ

Մայիսի 16-ին
Այսօր, մայիսի 16-ին, առաւօտեան ժամի 7-ին, Ղուրայի բանտի բակում կախեցին երեք աւազակներ—Միրիմ Աղա Միրզա օղուն, Կարի Կարի օղուն եւ Միրզա Մամէդ Մէլիք-օղուն: Առաջինը մի տիպահալ չարագործ էր եւ սարսափելի կողոպտումներ, սպանութիւններ, չարագործութիւններ էր կատարել, սարսափ տարածելով ամբողջ գաւառի մէջ: Նրան անտառում կալանաւորեց պրիստաւ Հասանէ-կօվ, որի եռանդուն գործունէութիւնը յայտնի է մեր ամբողջ ազգայնականութեանը: Մահվան դատաւիճիւր կարգաց Բագուի նահանգական դատարանի քարտուղար Պալով: Ներկայ էին

ամեն ընդարձակ դատիչներ փոխում է գետին, գորգերի վրա, երկար սուփրա, ոսկեգործ, շատ անգամ զուրանի այսանքով ասեղնագործված, սպասաւորները, աշխուհակները ներս են մտնում, գլուխներին դրած մեծ մեծ մէջմահիներ, ամեն մի մէջմահում դարաւած են մի քանի տեսակ կերակուրներ, որոնց մէջ չիւլալը, փիլալը, զանազան տեսակ, զանազան համեմունքով եւ խորութեամբ, անպակաս են: Ամին մի կերակուր լցված է կլոր սկաւառակի մէջ, որ ծածկված է կոնաձեւ արծաթեայ սարփուշով (ծածկոց) եւ ապա կնքված հաղիբի (սոստեւալեմ) կնիքով: Բոլոր օկաւաւորները, բոլոր կերակուրները միանգամայն չարվում են սփոռոյի վրա. դարսվում են եւ լաւաշ հաց, սրուսակներ մէջ ամեն տեսակ օշարակներ, արդուղ (թան) մեծ մեծ գդալներով: Միանգամայն դարսվում է մօտ հարիւր տեսակ կերակուր: Շահը բաղմում է օթեակի վրա, սուփրի գլխին. ամենքը ոտքի գնացած, ձեռները ծալած սպասում են, նոյն իսկ որդիները եւ եղբայրները, եթէ ներկայ են. ոչ ոք Շահի հետ չէ կարող սեղանի նստել: Նաղիւր մատուցանում է Շահին կերակուրներից մինը. նրա ներկայութեամբ քակում է կնիքը, վերցնում է սարկուռը եւ առաջ ինքն է ձաշակում կերակուրը. դրանից յետոյ միայն Շահը վերցնում է եւ ուտում. նա ուտում է, ի հարկէ, ձեռքով: Բոլոր կերակուրները ձաշակում է առաջ նաղիւրը եւ ապա Շահը. այդ զգուշութիւնը բանեցնում է, որպէս զի թոյն խառնված չը լինի կերակուրների մէջ: Մի քանի կերակուրներ ձաշակելուց յետոյ, Շահը ընտրում է որ եւ մի կերակուր եւ երբ վերջացնում է ուտելը, բերում են ոսկէ ալիսաֆա—լազան ձեռները լուսնալու համար: Ապա վերկենալով առանձնանում է խալվաթի սենեակում: Այն ժամա-

մեր քաղաքի դէպուտատը, լիազօրները, թուրք հոգեւորական դատը, պրիստորը եւ այլ պաշտօնեաներ:

Կախված Միրիմ իր բանտարկութեան ժամանակ էլ մի արդու մահվան պատճառ դարձաւ: Նա անցեալ տարի, երբ աւազակութիւն էր անում, սպանել էր Գուհուր-Կալեւմ մի գիւղացու եւ ինքն էլ նրան թաղել էր անտառում: Սպանվածի պատաւ մայրը գալիս է բանտը եւ աղերսում է Միրիմին յայտնել նրա որդու գերեզմանի տեղը. Միրիմը խոտաւանում է ասել տեղը, միայն եթէ պատաւ կինը բերէր նրա համար մի բուրդի եւ ուտելիքէն: Մայիսի 11-ին կինը բերում է փողը եւ ուտելիքէն. բայց դեռ քաղաք չը մտած՝ քաղաքային այգու մօտ պատահում է մի թուրքի, որը նրան յայտնում է թէ Միրիմին կախել են երկու օր առաջ: Կինը վայր է ընկնում, եւ «օրդի, օրդի, գերեզմանդ էլ չը գտայ» ասելով մոռնում է:

Մայիսի 4-ին Ղուրայում կատարվեց մի վերին աստիճանի յանդուգն սպանութիւն: Ղոնդ գիւղի տանուտէր Ջաբար Մարգար-օղլին չորս տարի առաջ ամուսնանում է ամապրցի աւազակապետ Ալի-Թէմուր Շահ-օղլու հետ: Ամինա Ջաբարիս-կիլիի հետ, այդ ամուսնութիւնը սաստիկ զայրացնում է աւազակապետին, եւ նա իր խմբով հետամուտ է լինում Ջաբարին՝ նրան սպանելու համար: Սպանութեան մի փորձ տեղի է ունենում ամիս ու կէս սրանից առաջ. տանուտէր Ջաբարին մի կազակի հետ հանդիպում են ութ աւազակներ. սխալվում է սարսափելի հրացանաձգութիւն, որի միջոցին սպանվում է կազակը, Ջաբարն էլ ոտի վրա թեթեւ վէրք է ստանում: Նա թաղնվում է մի ծառի ետեւում եւ այնտեղից երկու անգամ հրացան է արձակում, որի ձայնը լսելով մօտակայ գիւղից մարդիկ օգնութեան են հասնում: Աւազակները փախչում են: Ջաբարն այդ օրից իր ընտանիքով տեղափոխվում է Ղուրա, սակայն աւազակապետ Ալին զիւր սըրտուն է պահում: Նա կաշառում է Չիլեագիր գիւղացիներ Ալմաս Ուստա-Մալիք-օղլուն եւ Համիդ Մամէդ-օղլուն, որոնք ծպտած հագուստով քաշի օր քաղաքում են մտնում, որոնցով փողոցներում Ջաբարին, սակայն այս վերջինը միշտ բերդան հրացանը ձեռքին է մանգալիս:

Ամինա 4-ին, Ջաբարը, երեսը դարձրած դէպի մի խանութ, մայրանում խօսում էր մի խանութպանի հետ. նրա ետեւից ձիու վրա ետեւանում մէջ կօրոված եւ հաստ մորթու փափաղը մինչեւ ականջները իրած, Ալմաս Ուստա-Մալիք-օղլին հրացան է արձակում. գնդակը մէջքից ծակում է Ջաբարի մարմինը, դուրս է գալիս կողքից: Ջաբարը քաշ եւ եւ մարանջող մարդ էր. մահացու վէրք ստանալով, կարողանում է երեք անգամ հրացան արձակել իր հակառակորդի վրա, որին, դժբաղդաբար, չէ դիպչում գնդակը: Ջաբարը Ալ-

նակ ճաշի են նստում վեզիրները, պայտաւ կանները. նրանցից յետոյ սպասաւորները, աւելցողք տրվում է ստորին ծառաներին, շաթիրներին, պահապաններին:

Հարէմիսանի խոհանոցը, արդարաւանք, դահլիսանէն, ի հարկէ, առանձին են: Նախաճաշից յետոյ Շահը մի երկու ժամ հանգստանում է. ապա, երբ վեր է կենում, բերում են զոյալցուցիչ օշարակներ, եթէ ամառն է, կամ սուրճ, թէյ, եթէ ձմեռն է: Եթէ վեզիրների ունկնդրութիւն չը կայ, Շահը չըրջում է պալատի պարտէզներում կամ դարձեալ նարթախտա եւ սաթրանջ է խաղում: Երեկոյեան մօտ արարան է ուտում, այն է մրգեղէն, կամ կանաչեղէն՝ սքանչլիքով լազարաւուն քացախով: Երբ արեւը մայր է մտնում եւ կատարվում է երեկոյեան նամազը, պատրաստվում է նոյն ձեւով շա մը (ճաշը) երեկոյեան ժամը 7-8-ին: չամն աւելի ճոխ է լինում, քան նհարը: Շամից յետոյ, դարձեալ մի կամ երկու ժամ զուարճանալով, կամ լսելով զանազան լրագրիւնների թարգմանութիւնը, Շահը խօջապային եւ խօշաների, խալիչիկների առաջնորդութեամբ, լապտերներով գնում է հարէմիսանէն, որի չէմբից այլ եւս ոչ մի մահկանացու չէ կարող անցնել: Արարան ուտելու ժամանակ, Շահը յայտնում է ներքինապետին, թէ այդ գիշիւր կոնով մօտ է հիւր գնալու. ներքինապետը յայտնում է եւ բախտաւոր կինը բերող պատրաստութիւնները տեսնում է իր տիրոջ եւ ամուսնուհի արժանաւոր կերպով ընդունելու: Երաժշտութիւն, պար, երգ—թնութում է հարէմիսանում մինչեւ կէս գիշեր, որից յետոյ թաղաւորում է ամեն տեղ խորին լուսնութիւն:

(Կը շարունակվի)

մասը ձիով փակելու և քաղաքից դուրս Գա-
լապետի յանձնարարութեամբ գալիս է քա-
ղաք Միւշկիւրի պրիստաւ Հասան-բէկով, որի
խելացի կարգադրութեամբ աշուղով և կալա-
նաւորով երկու չարագործներին էլ Աստուծոյ
որ երկու հազար բուրձի տուգանք է նշանակ-
վում յօգուտ Ջաբարի ընտանիքի:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 14-ին

Մշակութի 86 և 88 համարներում «Աձ» և
«Ո» ծածկանուն տակ թաղանթաւ յօդուածա-
գրերը Շուշու կօնսիստօրիայի կազմը փոխելու
մասին սխալ տեղեկութիւններ են հաղորդել:
Թիֆլիսացի թիւթագործները առաջն առնելու և
գալթակոված մաքրելը միամտացնելու համար
պարտք են համարում այս երկտողով պարզել
ճշմարտութիւնը իր իսկական փաստերով:
Շուշու կօնսիստօրիայի մասին այնքան բո-
ղոքներ տարաքննել և կոյտել էին տեղում
ղեկավարներ, որ անմիջական բարեփոխութիւնը
միանգամայն պահանջ էր դարձել: Այդ պահանջը
ստեղծել էին կօնսիստօրեականները գործերը
և ոչ թէ անի քանի մարդկանց անհիմն մե-
ղադրանքները: Գիւղացիների և նոյն իսկ
քաղաքացիների արդարացի և արտաժաշ բո-
ղոքներն են եղել այն յենակները, որոնց
վրա հիմնված, Վեհափառ Հայրապետի շնորհած
արտօնութեամբ և օրէնքի որոշ յօդուածների
հիման վրա, ստիպված են եղել իսպառ արձա-
կել նախկին արտադրութեան կազմը, ստիպված
լինելով դանազան հանգամանքներից պահել
կործան քանակային, որի արձակման համար եւս
անշուշտ կը լինի առանձին կարգադրութիւն,
իսկ դիւանապահի համար կարգադրել եմ, որ
կօնսիստօրիան յարմար մարդ գտնելուն պէս
արձակէ:

Գալով իմ ընտրութեան գործին, յայտնում
եմ, որ ես «Լոյզմակի աղբեղութեան ենթարկ-
վող» և ոչ էլ «չլուծներին» գնահատութիւն
և կարեւորութիւն տուող: Ընտրութիւնը կա-
տարել եմ բոլորովին ինքնուրոյն կերպով և
ամենայն բարեխղճութեամբ, օրերով մտածելով
եղած քանանքներից համեմատաբար լաւերն
ընտրել, այնպէս որ նոր կազմը անհամեմատ
աւելի լաւ և բարեկոյտ է քան ինքը, որի հա-
մար իրանք թղթակիցները ձեռքը խղճին դը-
րած կը վկայեն:

Թերուս ատենադպրին փոխարինել է ձեռա-
բանաւարտ մէկը, որը թեմական դպրոցում
ուսուցիչ լինելով, մի քանի օրից յետոյ վեր-
ջացնելով իր դասերը և թողնելով դպրոցը
կը նստի իր բոլորովին իր նոր գործին և
պաշտօնին, որի համար «Ա» ծածկանուն տակ
թաղանթում թղթակիցը առարկում է, թէ իբր
ճորտ ատենադպրին այնքան գաղափար կունե-
նայ կօնսիստօրիայի գործերից, որքան կօշկա-
կարը երաժշտութիւնից, բայց պէտք է խոս-
տովանվէր նաեւ, որ շատ կարճ ժամանակամի-
ջացում նոր ատենադպրը աւելի գաղափար
կարող է ունենալ և աւելի հմտութիւն կարող
է ձեռք բերել, քան երկու տարիներ ծառայած
ինքը, որովհետեւ կը թուծեամբ և ուսմամբ
անհամեմատ նորը բարձր է հնչի:

Ծխական դպրոցի ամենապարզական կրթու-
թիւն անգամ չունեցող անգրագէտ գրագիրնե-
րին փոխարինել են դպրոցաւարներ, որոնց
«Մշակութի» թղթակիցը «Բագու և Շուշու թա-
փառող մանուկներ» է կոչում: Ծխական դպ-
րոցները փակվելուց յետոյ մեր բոլոր ուսու-
ցիչները սկսեցին անգործ թափանքի, յանցանք
է համարվում այդ թափառող և կամ դպրո-
ցական դասընթացը նոր աւարտած և գործ
փնտռող, բայց հին անգրագէտ գրագիրներից
անհամեմատ աւելի արժանաւորներին ծառա-
յութեան կոչելու:

Թղթակիցը յաւանդում է նաեւ վերաւորել
նոր անդամներին մինչ անհատական արժանա-
պատուութիւնը, որ թեմական դպրոցում երկար
տարիներ կրօնի դասատուի պաշտօն է վա-
րում, նոյն դպրոցում աւարտած լինելով իր
ուսումը: Միւսի համար էլ թէ զայնքին է իր
ուսուցիչ գործերով, բայց այդ տխուր գործերը
աւելի քան ինձ յայտնի պէտք է լինէին:
Թերուս ատենադպրը գործերով ակնարկում է քա-
նանայի, երէցփոխի և կամ իր ընկեր քահա-
նաներից մինչ հետ ունեցած սովորական ընդ-
հարուստներ, որոնք համեմատաբար արձակված
անդամներին գործերի հետ, շատ անհշտ և
անվստահ են: Յիրաւի դատաւարութեան ար-
ժանի կը համարէի ինձ, եթէ հարաւորութիւն
լինէր Շուշու քահանաների մէջ անգործ և կա-
տարելով քահանայ գտնել և դանց արած լի-
նան: Վերջինիս համար ակնարկում է նաեւ
թղթակիցը, թէ իբր քանի մի տարի առաջ ար-
ձակված է նոյն պաշտօնից, բայց եւ հաւաս-
տիացել եմ հիմնաւոր աղբիւրներից և գործե-
րից, որ ոչ թէ արձակված է եղել մի որ եւ է
յանցանքի համար, այլ ժամանակի գնահատման
կամայականութիւնները և գեղծունակները չը
կարողանալով տանել, ինքն է հրաժարական
տուել և արձակվել:

Աշոտ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

Կենդանիներին հովանաւորող Թիֆլիսի ըն-
կերութեան վերջին ընդհանուր ժողովում ըն-

կերութեան նախագահ գեներալ Ռէյտէր գեկու-
ցից, թէ նորին մեծութիւն Պարսից Շահը ըն-
դունեց ընկերութեան պատգամաւորութիւնը,
որ ներկայացրեց Շահին ընկերութեան պա-
տուաւոր նախագահի դիմում և ընկերութեան
կանօնադրութիւնը՝ կենդանիների հետ վար-
վելու կանօններով, որոնք սպառնում էին
պարսկերէն: Նորին մեծութիւնը ընդունեց ըն-
կերութեան պատուաւոր նախագահի կոչումը
և շնորհակալութիւն յայտնեց պատգամաւոր-
ների:

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի
հոգաբարձութեան մէջ շարունակվում են
ստացվել հեռագիրներ դպրոցի եօթնամասուն
ու հինգամսակի առիթով:

Թիֆլիսի քաղաքային դռման իր վերջին
նիստում որոշեց յատկացնել մանուկների խնա-
մատար ընկերութեան ապաստարանի համար,
որ գտնվում է Հաւաքարի քաղաքամասում,
տարեկան 500 բուրձի:

Պարիզից մեզ գրում են. «Մայիսի 21-ին,
Պարիզի հայ երեսօտարդների մի խումբ, կազ-
մելով գրական ընկերութիւն, բացեց մի հայ-
կական ընթերցարան, որտեղ ստացվում են
մօտ 30 հայ և օտար թերթեր: Ցուցահանդէսն
այցելող հայերի համար գուցէ աւելորդ չը
լինի յայտնել ևս այն, որ ընթերցարանը բաց է
ամեն օր ժամը 4½—6½, իսկ կիրակի օրերը
կէսօրից առաջ 10—12-ը, Հասցէ. Rue Cam-
pagne premiere 9: Bibliotheque armenienne».

Կովկասի կառավարչապետի օգնական գեներ-
ալ Ֆրէդէրիկ հրամանով՝ Թիֆլիսի նահանգա-
պետը առաջարկել է նահանգական վարչու-
թեան շինարարական բաժնին անմիջապէս
տեխնիկներ և էլէկտրօտեխնիկներ ուղարկել
մանրամասնօրէն գնելու էլէկտրական հաղոր-
դիչ լարերը վրաց աշխուսակաւութեան թաւա-
րօնում, որի մէջ մօտ օրերումս սկսվելու են
կայսերական թատրոնների գերասանների ներ-
կայացումները: Այս կարգադրութիւնը առաջ է
եկած նրանից, որ մօտ օրերումս «Օրիմոս»
հիւրանոցում պատահած հրդեհի պատճառը
համարվում է էլէկտրական հաղորդիչների ան-
կանօն դասաւորութիւնը:

Թիֆլիսի փոխարքայ՝ ապահովութեան ըն-
կերութեան ընդհանուր ժողովի վերջին նիս-
տում ընտրվեցին վարչութեան նախագահ
Պետրոս Ալիբեկեան, վերահսկող մասնաժողովի
կանդիդատներ՝ Յ. Միկիւք-Բեգլարեան և Յ.
Մարկոսեան:

Ներսիսեան դպրոցում այս տարի աւարտե-
ցին իրանց ուսումը և ստացան աւարտման
վկայականներ հետեւեալ աշակերտները. 1) Ար-
րահամանց Գրիգոր, 2) Անդոյանց Թէոդոս,
3) Աւետիսեանց Մարգար, 4) Գասպարեանց
Յովհաննէս, 5) Գուրգարեանց Սալատուր, 6)
Եսայանց Յարութիւն, 7) Երզնկեանց Սուրէն,
8) Թաթևուկեանց Արմենակ, 9) Ռաշմանեանց
Թադէոս, 10) Կեօնջեանց Յովհաննէս, 11) Յա-
կովբջանեանց Մկրտիչ, 12) Յովհաննիսեանց
Սարգիս, 13) Սարգսեանց Մկրտիչ, 14) Վար-
ժապետեանց Կոստանդին, 15) Տէր-Աստուա-
ժատրեանց Մար, 16) Տէր-Բարսեղեանց Ե-
րուանդ, 17) Տէր-Գրիգորեանց Ներսէս, 18)
Փափաղեանց Արշակ:

Չիատուրի գիւղից գրում են տեղական լրա-
գիրներին, թէ մայիսի 18-ին այնտեղ հրդեհ է
է պատահել, որ ոչնչացրել է գիւղի մի նշա-
նաւոր մասը: Այդիկ են նոյնպէս շատ կենդա-
նիներ: Պատմում են, թէ վնասը 150,000 ր.
է համեմատ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ մեզ գրում են. «Մշակի»
վերջին համարներից մէկի մէջ պ. Յ. Տ. Մ.
Երեւանից գրած իր նամակի մէջ յայտնել էր,
որ կարիւրուքը վնասել է Վաղարշապատի այգի-
ներին: Սակայն այդ տեղեկութիւնը քաղցած է
սխալ աղբիւրից, որովհետեւ թէեւ այստեղ
այդիկ 24-ին կարկուտ է եկել, բայց ոչինչ
վնաս չէ հասցրել ոչ ցանքներին և ոչ էլ այ-
գիներին:

ՂԱՄԱՐԼՈՒԻՑ մեզ գրում են. «Կիրակի,
մայիսի 14-ին, Ղամարու գիւղի երկրորդ երկ-
դասեան ուսումնարանի դահլիճում դերասան
կարներեան, տեղի ունեցողների աշակեր-
թեամբ, ներկայացրեց «Ժառանգ», «Բանաստեղծ»
և «Թուղթ խաղաղողի կիսնքը», պիեսները:

Ներկայացումը բաւական աշուղ անցաւ և հա-
ղապանները շատ գոհ մնացին:

Շարունակ գաւառի ԽԱՆԼՈՒԻՍԱՐ գիւղից
մեզ գրում են. «Այս տարվայ գարնան սկիզբը
մեր գիւղացիներին շատ առատ հունձ էր խոս-
տանում, եղանակը շատ մեղմ էր անցնում,
ցրտի չը կային: Սակայն ամսիս 12-ին եկած
կարկուտը ամեն բան փչացրեց: Մեր գաւառի
համարեա կէսի ցանքները, խաղողի այգիները,
պտղատու ծառերը կարկուտը փչացրել է, իսկ
ցորենի, գարու, բամբակի և չալիկների ար-
տերը կիսով չափ վնասվել են: Գիւղացիները
արտաւտնները աչքերին հաւաքել էին տե-
ղական պրիստաւի մօտ և յայտնելով իրանց
անկանխելի դրութիւնը՝ խնդրում էին, որ գոնէ
փող արվի իրանց կորեկ գնելու: Կարկուտի
հետքերը շատ խոշոր էին և կշռելուց յետոյ
ամեն մէկ հարա քառորդ ֆունտից քիչ աւել
էր. շատ աների լուսամուտների ապակիները
կոտրատվել են. սառիկ են շատ արագիւններ,
կոտրատվել են շատ ծառեր: Կարկուտից յետոյ
առաջագած հեղեղը մեծ վնասներ է տուել հայ
Նորաշէն գիւղին և Բաշնորաշէն գիւղին, շատ
արտեր հեղեղը բոլորովին փչացրել հողին է
հաւասարեցրել. քանդվել են հեղեղից Բաշնո-
րաշէնում 2 քարվանսարա, մի քանի խոնութ-
ներ և այլ շինութիւններ: Մեծ վնասներ է
հասցրել հեղեղը մեր ամբողջ գաւառին, փչաց-
նելով մեր դաշտերի առուակները, որոնց շը-
նելու համար 1898 թւականին մօտ 80 սամէն
քար էին թափած, որ գետից ջուր բարձրացնեն
դէպի առուակները: Բացի այդ ծախսից, տար-
վայ այս ժամանակին, որ ջուրը շատ հարկա-
ւոր է գիւղացիներին, նորից պէտք է հաւաք-
վեն, իրանց դաշտային աշխատանքները թող-
նեն և դնան առուակները խորկելու, քար
կրելու և նորից ջուր բերելու: Այդ վնասները
շատ զգալի են մեր գաւառի սոցաւ գիւղա-
ցիների համար. հարկաւոր է լուրջ օգնութիւն,
եթէ ոչ գիւղացիները անտանկի նեղութիւն-
ներ կը կրեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

—Երէկ հեռագիրը հաղորդեց, որ Ֆրանսիա-
կան սենատը ձայների մեծամասնութեամբ ըն-
դունեց կառավարութեան առաջարկը՝ ներդա-
նորին այն բոլոր անձերին, որոնք մեղադր-
վում են Դրէֆֆուսի գործի հետ կապ ունեցող
որ և է յանցանքի մէջ: Դրէֆֆուսի դատի վե-
րաքննութեան զլիւսաւոր նախաձեռնողը և զըր-
դիչը—Ջօյա հակառակ է ներման: «Aurore»
լրագիրը մէջ նա տպագրել է մի բայ նամակ՝
ուղղած սենատին, որի մէջ բողոքում է ներ-
ման նախագիծի դէմ: «Ես ցուում եմ,—ասում
է Ջօյա, որ կառավարութիւնը ևս պարզամիտ
միտանակ թույլութիւն ցուց տուին այդ գոր-
ծում: Եթէ գնեցեալ Մերսիէ կալանաւորված
լինէր այն օրից, երբ բացվեց նրա առաջին
յանցանքը, խաղաղութիւնը վաղուց վերական-
գնված կը լինէր Ֆրանսիայում: Կառավարու-
թեան երկխոսութիւնը կրիսպալատում է միայն
յանցարարների յանդուգնութիւնը: Ներման նա-
խագիծը պատժից կազաւէ այն յանցարարնե-
րին, որոնք հաւատարմութիւն են, թէ նախագիծը
առաջարկելիս ի նկատի է առնված Դրէֆֆու-
սեաների օգուտը: Ո՞վ է թմարահարում այժմ
Դրէֆֆուսի գործի մասին. ո՞վ չանկեց այդ նոյն
գործից Պարիզի քաղաքային ընտրութիւններին
թամանակ: Դրէֆֆուսի գործը կամենում են
վերանորոգել յետադիմականները և, ի հարկէ,
ծառայեցնել իրանց նպատակներին: Ներումը
հարաւորութիւն կը տայ Գերմանիային խաչ-
տառակել ամբողջ աշխարհի առաջ Ֆրանսիան՝
հրապարակ հանելով այն վկայաթղթերը, որ
նա տուել է Էստրէնադիւին: Այն ինչ Շվարց-
կօպպէնի ցուցումները կարելի էր ստանալ
տանից ներման և Գերմանիայի մերկայումս
ինքը անտեղի կը դառնար, եթէ Ֆրանսիան
կրէր պատժել յանցարարներին: Եղարկարու-
թեան մէջ Ջօյա նախագուշակում է, որ, ե-
րեւի, ներման նախագիծը կընդունվի, որով-
հետեւ պարզամիտը գուրկ է նախաձեռնու-
թեան արիական ոգուց:

—Սուրհանդակ՝ լրագիրը մէջ կարդում ենք.
«Վնայ մէջ Ամերիկացի միսիօնար Տօքթ. Րէյ-
նոյտ, իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է
Որբանոցին վրա, և այս պատճառաւ իր կող-
մէ նպատի բաշխման գործը սկսարացած է կը
գրեն մեզ: Հիմա Որբանոցին մէջ կան 600 որ-
բեր, որոնց 350-ը մանչ և մնացեալները աղ-
ջիկ են: Այս Ամերիկեան Որբանոցին 90-ի չափ
որբեր որդեգրուած են Ամերիկացի և Գերմանա-
ցի բարերարներէ: Թրանսպար պատերազմը մի-
շուէ Վան իր աղբեղութիւնը ունեցել է, և որ-
բերու պաշտպաններէն չորսը պատերազմին
մէջ մեռած ըլլալով, իրենց ալ Որբանոցէն
արտաքուստ են: Մ. Րէյնոյտ իր հաստատու-
թեան մօտ գտնուող աղբիւրէ մը ջուր բերել
ստով, կարեւոր պակաս մը լրացուցել է: Աղ-

բերին վրա իրաւունք ունեցող թաղեցիներու
հետ 41 տարուան պայմանագրութիւնը մը կըն-
քուելով, ամէն տարի որոշուողիչ գումար մը
պիտի վճարուի: Նոյն հաստատութեան մէջ հի-
մայ կան 200 ցորեկօթիկ աշակերտներ
ար:

—Նիւ-Եօրկից և Եւրոպական լրագիրներին հա-
ղորդում են հետեւեալ փաստը, որ կարող է
ապացոյց լինել, թէ անգլիացիները չը պէտք
է մեծ յոյս դնեն Մակ-Կինլէյի համակրական
զգայունքների վրա դէպի Անգլիան: «Թրիդ-
րիթաբուրդ» մի աղբալին տօնի առիթով,
Մակ-Կինլէյի ներկայութեամբ, գեներալ Սիկի-
լիս արտասանեց մի ճառ, որի մէջ խօսելով
բօշրենրի վիճակի մասին, ասաց. «Նրանք ցոյց
տուին աշխարհին, որ արժանի են անկախու-
թեան: Ես կարծում եմ, որ հասարակական
կարծիքը պատերազմից յետոյ Ամերիկայում և
նոյն իսկ Անգլիայում այնպիսի պարզութեամբ
կը յայտնէ իր պահանջները, որ բրիտանական
կառավարութիւնը անհրաժեշտ կը համարէ
պատուաւոր պայմաններ առաջարկել ի նպաստ
լիակատար հաշտութեան: Մեր այժմեան չէղք
գիրքը այն ժամանակ հարաւորութիւն կը
ապ մեզ աշակցել պատերազմից այդ տեսակ
ցանկալի եղբիւ և բարեկամական ծառայու-
թիւններ մատուցանել: Որովհետեւ Մակ-Կին-
լէյ ինքն էր ընտրել գեներալ Սիկիլիսի և
յանձնարարել նրան ճառ խօսելու և որովհե-
տեւ նախօրօք նա ծանօթ էր ճառի բովանդա-
կութեան հետ, ուստի այդ փաստը ոչ-պաշտօ-
նական ձեւով յայտարարութիւն է համարվում
Մակ-Կինլէյի կողմից, որ նա ձայն էր բարձ-
րացնէ յօդուած բօշրենրի անկախութեան: Բացի
դրանից Մակ-Կինլէյի այս վարմունքը գիշորու-
թիւն է համարվում բօշր պատգամաւորներին
և նրանց ամերիկացի բաղմամբիւ համակրող
ներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

22 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 22-ին Պետերբուրգ
վերադարձաւ ժողովրդական լուսաւորութեան
միւնիստը:

ԽԱՐԿՈՎ: Գաղաքային բանկերի ներկայա-
ցուցիչների ժողովը վերջացրեց բոլոր հարցերի
քննութիւնը: Միջնորդութիւնները նախապատ-
րաստելու և ձեւակերպելու համար Խարկովի
բանկին կից հիմնվում է ժողովի մշտական
բիւրօ:

ՏԵՆԵՑԻՆ: Ստացված են վրդովեցուցիչ տե-
ղեկութիւններ ամերիկական և անգլիական
քարոզիչների գրութեան մասին Պատմաֆիլոսո-
ֆիկ: Եկան գերմանական և աւստրիա-
կան զօրաբաժնիները:

ՆԻՒԿԵՍՏ: Ոչ մի նշան չը կայ, որ ցոյց
տար, թէ բօշրենր ամառի բն թողնել կէն-
գանէկ: Դրակրի լեռները պահպանվում են
Օրանսեան բօշրենրի մի փոքրաթիւ զօրա-
բաժնի միջոցով:

ՆԻՒԴՈՐԿ: Կրեւդէր մի հեռագիր է ուղար-
կել Մախադադրակցի, որով յայտնում է, թէ
պատերազմը կը շարունակվի կատաղաբար մինչեւ
վերջը:

ԼՈՐԵՆՑՈ-ՄԱՐԿԵԶԻ: Պաշտօնապէս հաղոր-
դում են Պրետօրիայից, թէ մայիսի 18-ին ծանր
կոխ տեղի ունեցաւ Իրմի մօտ: Բօշրենրը
պահեցին իրանց դիրքերը: Մախադադրակցի
ամեն օր պաշարեղէնով բեռնաւորված 15
գնացք է ուղարկվում Լէյզէնբուրգ:

23 մայիս

ՏԵՆԵՑԻՆ: Բրիտանացի քարոզիչ Ռօբինզօն
սպանված է հինգ անգլիացիների հետ միասին
Նօրման, որ նոյնպէս քարոզիչ է, գերի է տար-
ված և այժմ մեծ վնասի մէջ է:

ՍՕՅԻՍ: Բողաբական կառավարութիւնը
բողքեց թիւթական զիֆֆերենցիալ մաք-
սային տուրքերի դէմ, մասնաւոր ղեկավար
գաղափարի վաստակական գրութիւնը, նոյնպէս
և այն հանգամանքը, որ առեւտրական դաշ-
նագիր ժամանակամիջոցը դեռ ևս չէ լրացել
Բողաբական կառավարութիւնը, ինչպէս և
սերբիական ու ուսմանական պահանջում են
հարցը ենթարկել խառն յանձնաժողովի քննու-
թեանը:

ՊԱՐԻՉ: Առաւօտեան Համաձայնութեան և
Ալէքսանդր III-ի կամիջների միջեւ տեղի ունե-
ցաւ ընդհարում երկու մարդատար ռազմա-
րէ մէջ, որոնցից մէկը իր էր մարդկանցով
իսկ միւսը դատարկ: Վերջինը ջրատուց և
զաւ: Ջոշերի մասին ոչինչ չէ լսվում:

(Ժամերը Պետերբուրգի հաշվով)
տարբերութիւնը 58 րօպէ:

10

Типографія Грузинск. Т—ва. Большая-Ванская ул., № 27.